

Ս. Ս. Աբրահամյան

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա Ճ Ո Ւ Կ

Այս բառը մեր լեզվում հայտնի է իբրև հոմանիշ երանք, ցայլք բառերի: Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարան»-ում սրա դիմաց նշվում է՝ «Մարմնի փոս ընկած մասը ստորին որովայնի և ազդրերի միջև, ցայլք»¹: Մի փոքր տարբեր բացատրություն ենք գտնում Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ում՝ «Առականքի երկու կողմերի միջոցը, փոսորակ տեղերը»: Երանով նշվում է նաև հիշյալ բառով արտահայտվող հասկացությունն առանձնակիությունը: Աճուկ է կոչվում ոչ միայն ազդրերի ու ստորին որովայնի միջև ընկած մասը ամբողջովին, այլև՝ յուրաքանչյուր ազդրի և որովայնի միջև եղած փոսը՝ առանձին վերցված: Դա երևում է նաև Ստ. Մալխասյանցի բերած օրինակներից (համա. «Աճուկները բռնվել են ...Ձախ աճուկի վրա խոց է դուրս եկել»): Բառը ժողովրդի մեջ տարածում ունի այժմ հատկապես այս նշանակությամբ (որոշ բարբառներ պահում են նաև մյուս իմաստը):

Աճուկ բառը հին մատենագրության մեջ վկայված չէ. ամենահին վկայությունը 14-րդ դարից է (Ֆրա Մարթին): Հին բանասերները այս համարել են ոչ գրարար բառ: Հր. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում այս բառը ներկայացված է ծագումն անհայտ բառերի շարքում³:

Բնությունը կարելի է հաստատել բառի կազմությունը և ծագումը: Արմատն է աճ, ածանցված -ուկ ածանցով: Բառիս արմատը նույնանում է աճել բայի արմատի հետ, որն ստուգաբանված է և հայտնի է հնդեվրոպական ծագումով, հնիս. *adha* — արմատից, որը տարածված է հնդեվրոպական շատ լեզուներում⁴:

-Ուկ ածանցը հայերենին հատուկ դերբայական ածանց է: Դա գոյություն ունի մի շարք բարբառներում և խոսվածքներում (Մուշ, Վան, Մոկք, Շատախ, Սպարկերտ, Գավաշ, Տիգրանակերտ, Նիկոմիդիա, Արարատյան առանձին խոսվածքներ և այլն) իբրև հարակատար դերբայի մի տարրերակի մասնիկ՝ քնուկ լքնած, պառկուկ լքառկած և այլն (որոշ տեղերում կ-ի ձայնեղացումով): Այդ ածանցը համեմատարար քիչ տարածմամբ հանդես է գալիս նաև մի քանի ունակ լինելու, ենթակա լինելու նշանակությամբ: Այսպիսի իմաստով գործածության օրինակներ կան դեռ հայոց լեզվի հին շրջանից վկայված. ինչպես՝ առուկ ճհախշտակող՝ առնուլ բայից, պարծուկ լքարծեցող, սնապարծ, հպարտ՝ պարծիլ բայից (երկուսն էլ 5-րդ դարից) և այլն:

¹ Անդ. հատ. 1, էջ 34:

² Էջ 1, ազումէջ բառի տակ:

³ Անդ. հատ. 1, էջ 173:

⁴ Նույն տեղում, էջ 173:

Աշխարհաբարում ունենք բանուկ, կտրուկ և այլն: Վերջին նշանակությունը ամանցը դուրս է գալիս բայական շրջանակներից և կազմում է անվանական ձևեր:

Ահուկ բառի -ուկ ամանցը այսպիսի նշանակությունը է: Ուրեմն նախապես բառի իմաստը պետք է լիներ «աճող, աճման համար ունակ», և ապա ըստ գործածության խոսքի մասային անցումով բառը ձևոք է բերել դոլականի արժեք:

Այս բացատրությունը կարող էր ձևական թվալ, և թե իրոք ահուկ-ը չկապվեր աճման գաղափարի հետ: Դեռ այսօր էլ մեր ժողովրդի մեջ տարածված է մարդու հասակ գցելու երևույթը աճուկի հետ կապելու պատկերացումը: Հենց այս պատկերացման հիման վրա էլ ստեղծվել է ահուկ բառը:

Այսպիսով, ահուկ բառը դուրս է գալիս ծագումնաբան հայտ բառերի շարքից և դիտվում է որպես հնդեվրոպական ծագում ունեցող մի արմատից ամանցված ձև:

2. Ա Ր Ա Տ

Արատ բառը հին հայերենում հայտնի է՝ «1. մարմնական պակասություն, թերություն, 2. բիծ, կեղտ, կեղտի նշան» իմաստներով: Ժամանակակից գրական լեզվում գործածվում է նաև առաջին երկու իմաստներին զուգահեռ իմաստային առումներով՝ «որևէ բարոյական պակասություն, ախտ, որևէ պակասավոր հատկություն, որ նվազեցնում է առարկայի արժեքը»¹: Մեր հին մատենագրության մեջ վիճված է մեարդյան շրջանից: «Հայերէն արմատական բառարան»-ը չի հանձնարարում բառի շուրջ եղած ստուգաբանություններից և ոչ մեկը, ուստի այն մնում է ծագումնաբան հայտ բառերի շարքում²:

Բառի իմաստը և ձևը հիմք են տալիս առաջարկելու հետևյալ բացատրությունը: Արատ բառը արմատական բառ է և մեր լեզվում առկա է իբրև արած՝ արդեն մոռացված արմատական բառի մի զուգակից ձև: Արած բառը գործածվել է հին հայերենում և նշանակել է՝ ըստ «Առձեռն բառարան»-ի՝ «1. վերքի արատ, բիծ, 2. արատ ձգող» (էջ 130), ըստ «Հայերէն արմատական բառարան»-ի՝ «1. վերքի, մանավանդ բորոտության նշան, սպի, կեղ, որ երևում է մորթի վրա՝ հիվանդությունից առաջ կամ քնում՝ հիվանդությունից հետո, 2. հազուստի կամ քարի ու պատի վրա փտության նշան, ապա՝ «որքուն հիվանդությունը, սպիավոր, սպի ձգող (ախտ)» (էջ 611):

Բառական այս իմաստների համեմատությունը ոչ մի կասկած չի թողնում՝ ընդունելու արատ և արած բառերի ընդհանրությունը իմաստային տեսակետից: Հնչյունային կողմի ընդհանրությունն էլ ակնհայտ է: Արմատի զուգահեռները ա և օ փոփոխակներով վաղուց դիտված ու հիմնավորված իրականություններ են մեր լեզվում: Հմատ. խայտ — խայծ, հ-պարտ — պարծիլ — պարծանք, մուտ — մոյծ և այլն: Նշանակում է՝ հնչյունային ընդհանրությունը ևս անժխտելի է:

Պարզված է, որ արած արմատը ընդհանուր է արածիլ «ճարակել, խոտ

¹ Իմաստների մասին տե՛ս «Առձեռն բառարան», Առ. Մուխամեդյան, «Հայերէն բացատրական բառարան», համապատասխան բառի մոտ:

² Տե՛ս Հ. Աճառեան, «Հայերէն արմատական բառարան», հատ. I, էջ 623:

ուտել՝ բայի արմատի հետ (վարակիչ վերքերի անունները շատ անգամ ծագում են «ուտել» գազավարից՝ կերցավ, մազկեր, ծամկեր, ռուս. КОСТОЕД «ոսկրի փտախտ», բառացի՝ «ոսկրակեր»)¹:

Իսկ արածել բայը ծագում է հնիւ. trəg¹ արմատից²: Հասկանալի է, որ քննարկվող արատ բառը նշված հիմունքներով իվերջո կապվում է հնդեվրոպական այս արմատի հետ: Այս ապացուցելու համար իբրև անմիջական հընչյունային հենարան կարող է ծառայել նաև արօա բառը, որը նույնպես պատկանում է արածել բայի արմատին:

Այսպիսով՝ հայերենի արատ բառը իբրև արած բառի մի առանձին տարբերակ նրա հետ կապվում է հնիւ. trəg¹ արմատի հետ արածել բայի միջանկյալ օղակով:

Այսպիսի բացատրություններ արատ բառը ևս դուրս է գալիս ծագումով անհայտ արմատական բառերի շարքից և ներկայանում է որպես ստուգաբանված համապատասխան արմատների մի տարբերակ:

3. Ա Ր Գ Ա Տ > Ա Ր Ք Ա Տ (բարբառային)

Արգատ բառը տարածված է արդի որոշ բարբառներում (հատկապես Արարատյանում) արքատ արտասանությամբ: Նշանակում է «որթատունկի կտրված ավելորդ ճյուղ, որ գործածում են վառելու համար»:

Հայ հին մատենագրության մեջ սա վկայված չէ. ըստ Ն. Բյուզանդացու՝ միջին հայերենի շրջանի բառ է: Արգատ ձևով հիշատակում են Երեմիայի և Ն. Բյուզանդացու (Պրանսերեն-հայերեն) բառարանները (ըստ «Արմ. բառ.»-ի, I, էջ 643): Բարբառային բառարանները տալիս են արքատ ձևով³: Այստեղ գործ ունենք գ ձայնեղ բաղաձայնի շնչեղ խլացման հետ, որը սովորական երևույթ է Արարատյան բարբառում: Հ. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում իբրև գլխաբառ միանգամայն իրավացի կերպով բերված է արգատ ձևով: Սակայն այստեղ էլ ներկայացված է իբրև ծագումն անհայտ և չստուգաբանված բառ:

Բառի իմաստը և ձևը թույլ են տալիս առանձնացնելու նրա մեջ արգ արմատը: Սա ընդհանուր է մեր լեզվում գործածվող արգ արմատի հետ՝ նրա «զարգացում, բարգավաճում» իմաստի տեսակետից. հմմտ. գ-արգ-անալ. իսկ այդ արմատը ծագումով հնդեվրոպական է, բայց հայերենում համարվում է իրանյան փոխառություն⁴:

Արգ արմատը այստեղ ածանցված է հայերենի -ատ ածանցով, ուստի բառը ըստ կազմության կարող էր նշանակել «զարգացումից, աճումից դուրս, աճելուց դադարած», որը ընկած է բառի արդի նշանակության հիմքում, սակայն ժամանակի ընթացքում միագնվել է, ածականի նշանակությունն անցել է գոյականի՝ «որթատունկի կտրված ճյուղ (որն այլևս չի զարգանում, չի աճում)» իմաստով: Նույն ածանցով հայերենում կան և ուրիշ գոյականներ, ինչ-

¹ Տե՛ս Հ. Աճառեան, «Հայերէն արմատական բառարան», էջ 611:

² Նույն տեղում, էջ 612:

³ Ս. Ամատունի, «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912, էջ 75, Հ. Աճառեան, «Հայերէն գաղափարական բառարան» (Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Թ.), Թիֆլիս, 1913, էջ 156:

⁴ Հ. Աճառեան, «Հայերէն արմատական բառարան», հատ. I, էջ 635:

պես՝ կենատ (<կհան + աա = կլանք կտրող) «մի տեսակ թունավոր բույս», տերևաա «մատիտեղների կարգին պատկանող բույս», միջատ, ջուկատ և այլն:

4. Մ Ա Ն Ո Ի Շ Ա Կ

Ավանդված է մևորոպյան շրջանից և ծագումով հայտնի է իրրև փոխառություն պահլավերենից¹: Իմաստը նույնն է արդի գործածության հետ «մանուշակ ծաղիկ»: Կա և մանիշակ ձևը, որը նույնպիսի փոխառություն է, բայց ասորերենի միջոցով²: Հայերենից փոխառված են համարվում՝ manišak «մանուշակ» քրդերենի՝ Տերսիմի բարբառում և manüšak «մանուշակ» ուտիերենում³:

Այս փոխառությունների հետ պետք է առաջարկել նաև ալբաներենը, որտեղ բառը գտնում ենք manushaq ձևով՝ նույն նշանակությամբ⁴: Ձևը համապատասխան իմաստով համընկնում է հայերենին: Եւ չի կարելի անմիջականորեն պահլավերենից համարել, քանի որ այն եղել է vanavšak ձևով և ոչ էլ պարսկերենից, որտեղ դարձել է بانه banaisa, իսկ քրդերենում էլ դարձել է benefiša, benewš (ինչպես որ մեր որոշ բարբառներում էլ ունենք իրրև նոր փոխառություն՝ բանամշա): Թերևս կարելի էր ընդունել, որ ալբանականը փոխառվել է թուրքերենի միջոցով, բայց այդ էլ չի հաստատվում, քանի որ այստեղ բառը փոխառված է meneise կամ menekse ձևով (ըստ «Արմ. բառ. ք-ի»):

Եղած բոլոր ձևերի մեջ հարազատորեն համընկնում են հայերենը և ալբաներենը:

5. Մ Ս Խ Ե Լ

«Ծախսել, վատնել» իմաստով վկայված է միջին շրջանից (Վարդան Արևելցի, Տաթևացի և այլն): «Հայերէն արմատական բառարան»-ում բերված է որպես առանձին արմատական բառ⁵: Գալառական ձևերի բաժնում Հր. Աճառյանը նշում է, որ «Արմատը ունին Երև. մըլսւ, Տի. միսլի «վատնում, մըսխում»⁶: Ուրիշ բացատրություն չի տալիս:

Այնհայտորեն բառը կապվում է ծախ արմատի հետ: Սրա հոգնակի հայցականի ծախս (գրաբ. ուղղ. ծախք) ձևից կազմված է ծախսել բայը: Ծախս ձևի կրկնությունը բարբառներում առաջացել է ծախս-մախս > ծախս-մըլսւ, որը մեր օրերում էլ շատ տարածված է մեր առանձին բարբառներում և արտացոլում է բառակազմական մի սովորական երևույթ (հմտ. հաց-մաց, պանիր-մանիր և այլն): Այստեղ յուրահատուկն այն է, որ այս կրկնությունից անջատվել է վերջին մասը իրրև առանձին բառ՝ մախս > մըլսւ, սրանից էլ մասնիկավորվել է մսխել բայը, որը գրափոխությամբ դարձել է մսխել:

* * *

Այս բացատրությունները մենք բնավ էլ չենք համարում սպառնիչ ու վերջնական: Դրանք բերեցինք գիտողությունների կարգով: Գոհ կլինեինք, եթե դրանք արժանանային մասնագետների լրացումներին:

¹ Հ. Աճառեան, «Հայերէն արմատական բառարան», հատ. VI, էջ 826:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 827:

⁴ Տե՛ս «Албанско-русский словарь», сост. Р. Д. Кочу и Д. И. Скенди, Москва, 1950, էջ 205:

⁵ Հ. Աճառեան, «Հայերէն արմատական բառարան», հատ. IV, էջ 1189:

⁶ Նույն տեղում: